



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«18» 05 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 062 - 26

Նախաձեռնողը՝

« ԶԱՆԳՎԱԾ » ՍՊԸ

ք. Երևան, Գյուլիգեիյան Փ./7/11 Նոր Նորք

Գործունեությունը՝

Թիվ 136 հիմնական դպրոցի կառուցում

Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Լեփսիուսի փողոց 6

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 062 - 26

« 18 » 05 2026թ.

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 136 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ՋԱՆԳՎԱԾ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (այսուհետ՝ ՇՄԱԳ), նախագիծ
Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ներածական մաս. Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսուսի փողոցի հ. 6 հասցեում նախատեսվում է իրականացնել թիվ 136 հիմնական դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.226725 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը դասվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների շարքին:»

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված է և գտնվում է խիտ բնակեցված քաղաքային միջավայրում: Տարածքի անմիջական հարևանությամբ՝ մոտ 10 մ հեռավորության վրա գտնվում է թիվ 153 մանկապարտեզը, ամենամոտ բնակելի շենքը՝ 15 մ հեռավորության վրա, իսկ հասարակական գոտին՝ մոտ 35 մ հեռավորության վրա, Զեյթունի գերեզմանոցը գտնվում է 25 մ հեռավորության վրա: Տարածքի ռելիեֆի մորֆոլոգիական տիպը թեք է, մասամբ հորիզոնականին մոտ, տեղ-տեղ ձորակներով մասնատված: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 800-1500 մ սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը գտնվում են 30 մետրից խորը հորիզոններում:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատմամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները, ինչպես նաև զգայուն էկոհամակարգերը, բույսերի և կենդանիների հազվագյուտ և Կարմիր գրքային տեսակները: Բուսահողային շերտը ներկայացված է մոտ 0.2 մ հզորությամբ կավավազային խճով:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝



- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 1.226725 հա,
- կառուցապատման մակերեսը՝ 2270 մ² (ներառյալ հարթակները),
- կառուցապատման մակերեսը՝ 1828.6 մ² (առանձ հարթակներ),
- կանաչապատման մակերեսը՝ 3822. 05 մ²,
- անջրանցիկ մակերեսը՝ 5510 մ² (առանձ շենքերի),
- բարեկարգման մակերեսը՝ 6873.4(ներառյալ հարթակները):

Նախատեսվող դպրոցն իրենից ներկայացնում է երեք մասնաշենքից բաղկացած շինություն՝ երեք վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկերով: Այն նախատեսված է շուրջ 450 աշակերտի կրթական գործընթացի կազմակերպման համար: Տարրական դպրոցի մասնաշենքը տեղաբաշխված է առաջին, երկրորդ և երրորդ հարկերում և ունի առանձնացված մուտք՝ շենքի հետնամասից: Երկրորդ և երրորդ հարկերում տեղակայված են նաև միջնակարգ դպրոցի դասասենյակները: Տնօրենի աշխատասենյակը և ուսուցչանոցը նախատեսված են երկրորդ հարկում: Շենքում առկա են ուսումնական, վարչական և օժանդակ նշանակության տարածքներ:

Դպրոցի տարածքում նախատեսվում է ստեղծել բացօթյա ուսումնական և մարզական միջավայր: Բարեկարգվելու է գոյություն ունեցող մարզադաշտը, որի մակերեսը պատվելու է ժամանակակից ռետինե ծածկույթով: Բակային տարածքում նախատեսվում են հանգստի և հավաքների համար հատվածներ, ինչպես նաև կանաչապատ գոտիներ՝ սիզամարգերով, դեկորատիվ ծառերով և թփերով: Տարածքի բարեկարգման շրջանակներում կկազմակերպվեն ներբակային ճանապարհներ և հետիոտնային ուղիներ՝ ապահովելով տարածքի ֆունկցիոնալությունն ու անվտանգությունը: Նախատեսվում է նաև ապահովել հրշեջ տեխնիկայի անխոչընդոտ մոտեցումը շենքերին:

Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար դպրոցն ապահովվելու է թեքահարթակներով, համապատասխան սանհանգույցներով և այլ անհրաժեշտ հարմարություններով՝ ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

Դպրոցի տանիքը հարթ է՝ կազմակերպված ջրահեռացման համակարգով: Ստորգետնյա հարկի մի մասը կիսանկուղային է. այնտեղ տեղակայված են տարրական դասարանների մարզադահլիճը և արհեստանոցները:

Դպրոցի ջերմամատակարարումն ապահովելու նպատակով նախատեսվում է գոյություն ունեցող կաթսայատան ներսում իրականացնել վերազինման աշխատանքներ: Մասնավորապես՝ տեղադրել 300 լիտր ծավալով ջրատաքացուցիչ՝ տաք ջրամատակարարման համար, փոխել շրջանառու պոմպերն ու խողովակաշարը, ինչպես նաև առանձնացնել օդափոխության, ջեռուցման և մարզասրահի ջեռուցման կոնտուրները: Զերմամատակարարման առկա հզորությունն (290.7 կՎտ և 151.2 կՎտ) ավելացվելու է ևս մեկ՝ 80 կՎտ հզորությամբ պատի կոնդենսացիոն կաթսայով:

Դպրոցի նոր մասնաշենքերը կառուցվելու են գործող՝ քանդման ենթակա շենքի տեղում, որտեղ նախատեսվում է առկա ենթակառուցվածքների ամբողջական արդիականացում:

Շահագործման ընթացքում հիմնական դպրոցի ջրամատակարարումը, ջրահեռացումը, էլեկտրամատակարարումը և գազամատակարարումն իրականացվելու են գոյություն ունեցող համակարգերի միջոցով՝ ենթակառուցվածքները տնօրինողների կողմից տրամադրված տեխնիկական պայմանների համաձայն:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են մեքենաներ և մեխանիզմներ: Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն իրականացվելու են շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում:



Որպես շինարարական նյութեր օգտագործվելու են երկաթբետոնե կառուցվածքներ (կարկասներ), մետաղական տարրեր, ամրան, ավազ, ապակի և այլն: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, անիվների լվացման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Խմելու ջուրը մատակարարվելու է դպրոցի գործող ջրագծից. մինչև աշխատանքների սկիզբը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կկնքվի համապատասխան պայմանագիր: Ջրցանի և անիվների լվացման համար անհրաժեշտ տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռններով՝ պայմանագրային հիմունքներով: Ջրօգտագործման ընդհանուր ծավալը (147 աշխատակցի հաշվարկով, ներառյալ ջրցանն ու անիվների լվացումը) շինարարության ողջ ժամանակահատվածի համար կկազմի 10,529.5 մ³: Շինհրապարակին կից նախատեսվում է տեղադրել պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը, անիվների լվացման և բետոնաջրերը: Պարզեցված ջուրը կվերաօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ նստվածքային տիղմը շինադրի հետ կտեղափոխվի աղբավայր

Քանդման աշխատանքները կիրականացվեն օրենքով սահմանված կարգով և չեն ներառի պայթեցման եղանակներ: Առաջացած թափոնները կտեղափոխվեն Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված հատուկ տարածք (աղբավայր):

Շինարարական աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվում են հողային աշխատանքներ, որոնց ընթացքում տարածքից հեռացվող բուսահողը (700 մ³ ծավալով) կօգտագործվի կանաչապատման նպատակով: Հողի բերրի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումն իրականացվելու է ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան: Երկաթբետոնե հիմքերի տեղադրման նպատակով հանվող գրունտի մի մասը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ մնացած զանգվածը կտեղափոխվի Երևանի քապետարանի կողմից տրամադրված համապատասխան վայր: Շինադրը կհավաքվի շինհրապարակում՝ թափոնների համար նախատեսված հատուկ տեղում, և կտեղափոխվի բացառապես թափոնների տեղափոխման համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում կենցաղային աղբի կուտակման համար կտեղադրվեն աղբամաններ, և աղբի հեռացումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան պայմանագրի հիման վրա:

Համաձայն Հաշվետվության՝ ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներից ելնելով՝ շինհրապարակում աշխատողներն ապահովված կլինեն անհրաժեշտ հանգստի, կենցաղային և սանիտարահիգիենիկ (լվացարան, զուգարան) պայմաններով:

Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված նախագծի համաձայն: Տնկվելու են նոր ծառեր և թփեր, այդ թվում՝ արծաթափայլ եղևնի, կենի, սոճի, սոսի, հացենի, հայկական չմենի, սրնգենի և կարմրան:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային



զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, ինչպես նաև շինարարական տեխնիկայի և մեխանիզմների շահագործման հետ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիթորինգ.

➤ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական՝ 24 ժամյա չափումներ (Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված օդի որակի չափիչ սարքիտեղադրում),

➤ փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ ըստ անհրաժեշտության, մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ,

➤ տրանսպորտային միջոցների սպասարկում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

➤ հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշեկլանիչ սարքավորումներ:

➤ հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շաբաթական մեկ անգամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ. 136 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացն իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Առողջապահության նախարարությունը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Քաղաքաշինության և Կադաստրի կոմիտեները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման փուլում:

Հաշվետվության մեջ ներկայացված մթնոլորտային օդն աղտոտող նյութերի հաշվարկների համաձայն՝ արտանետումները չեն գերազանցելու սահմանային թույլատրելի նորմերը: Աղմուկի և թրթռման մակարդակները նույնպես լինելու են սահմանված նորմերի սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա 30 ծառից 10-ը, որոնք վնասված կամ չորացած են, ենթակա են հատման: Հատվող ծառերի փոխարեն, կանաչապատման աշխատանքների շրջանակում, կտնկվեն կրկնակի և ավելի քանակությամբ նոր ծառեր ու թփեր:

Ամփոփելով բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունը՝ կարելի է եզրահանգել, որ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն տեղային (լոկալ), ժամանակավոր և թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարության և շահագործման փուլերում անհրաժեշտ է հաստորեն հետևել հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարման



ժամանակացույցին, իսկ դրանց անբավարարության դեպքում՝ նախատեսել լրացուցիչ քայլեր՝ բնապահպանական նորմերն ապահովելու նպատակով:

- Շինհրապարակի կազմակերպումը, փոշու արտանետումների վերահսկման նպատակով մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը և փոշենստեցման միջոցառումներն իրականացնել Երևան քաղաքի ավագանու 2012թ. մարտի 16-ի N 405-Ն որոշման, Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանի, ինչպես նաև «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

- Շինարարական աղբի և թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Կանաչապատման նախագիծը ներկայացնել Երևանի քաղաքապետարան՝ համաձայնեցման՝ ապահովելով ՇՄԱԳ-ով նախատեսված կանաչապատման աշխատանքների իրականացումը, կանաչապատման մակերեսը և խնամքը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ - ի կողմից ներկայացված Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 136 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Կրիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Ռուզան Մակինյան